Հայ-Ռուսական համալսարանում գործող
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
իրավագիտություն 063 մասնագիտական խորհրդին
Հասցե՝ ք. Երևան, Հովսեփ Էմինի 123

Կ Ա Ր Ծ Ի Ք

պաշտոնական ընդդիմախոսի՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Դավիթ Արտյոմի Թումասյանի՝ Արփի Աշոտի Լազարյանի «Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում պատժիչ քաղաքականությունն ու պատիժների համակարգը ենթարկվել է էական փոփոխությունների վերջին տարիներին, ինչը հանգեցրել է նոր ինստիտուտների ձևավորման, առկա ինտիտուտների փոփոխության, ինչպես նաև ազգային օրենսդրության վերանայման: Այդ համատեքստում իր ուրույն տեղն է զբաղեցրել ու զբաղեցնում ազատազրկում պատժատեսակը՝ հանդիսանալով ոչ միայն առավել խիստ պատիժ, այլ նաև ունենալով առավել լայն կիրառում դատական պրակտիկայում: Այն, որ ազատազրկման դատապարտված անձանց իրավունքների, ազատությունների ու շահերի պաշտպանությունը ոչ միայն ներպետական, այլ նաև միջազգային օրենսդրության հիմնախնդիրներից է՝ փաստ է, իսկ այն որ դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներն անհրաժեշտ է կիրառել ու իմպլեմենտացնել Հայաստանի Հանրապետությունում՝ ներկա իրադրության հրամայական է:

Հայաստանում կատարված և իրավապահ մարմինների կողմից գրանցված հանցագործությունների ընդհանուր թվից ակնհայտ է, որ քրեակատարողական իրավահարաբերությունների մասնակիցների թիվը տարեց տարի ավելանում է,

հետևաբար ատենախոսությունում քննարկվող հարցերը վերաբերում են ավելի մեծ թվով անձանց: Նման իրավիճակում կարևորվում է ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների մանրամասն ուսումնասիրումը և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրների վերհանումը Հայաստանի Հանրապետությունում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ազատազրկման դատապարտված անձանց առանձին կատեգորիաներին՝ անչափահասներին, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և այլն:

Այս համատեքստում Ա. Լազարյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ դրանում արտահայտված մի շարք դիրքորոշումներ և մոտեցումներ կարող են հայեցակարգային նշանակություն ունենալ ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների կիրառման ու իմպլեմենտացման հարցում:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ ատենախոսը հաջողությամբ լուծել է հետազոտության խնդիրները, ինչի շնորհիվ իրականացվել է հետազոտության նպատակը, այն է՝ դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների և ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության ներպետական և միջազգային իրավակարգավորումների, առանձին կատեգորիայի դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների ուսումնասիրությունն ու վերլուծությունը և դրանց կիրառման հիմնախնդիրների բացահայտումն ու լուծման հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա ատենախոսի կողմից ներկայացվել են մի շարք արժեքավոր առաջարկություններ: Մասնավորապես, կարևոր նշանակություն ունեն պաշտպանության ներկայացվող 4-րդ և 5-րդ դրույթներում նախատեսված հիմնահարցերը:

Ատենախոսի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության աղբյուրների մեծ քանակության օգտագործմամբ, հարուստ փորձառնական հիմքով և վիճակագրական տվյալներով:

Այս ամենը թույլ է տալիս ատենախոսի հետևությունները և առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Ատենախոսության նյութը ներկայացված է հստակ և ամբողջական, աշխատանքը գրված է մասնագիտական գրագետ լեզվով և ոճով, գիտական բարձր մակարդակով և տրամաբանական հաջորդականությամբ՝ հնարավորություն տալով պատկերացում կազմել դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների և ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության ներպետական և միջազգային իրավակարգավորումների, առանձին կատեգորիայի դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների մասին:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրանց:

Վերը շարադրվածը վկայում է այն մասին, որ ատենախոսի կողմից մեծ աշխատանք է կատարվել հետազոտության բավականին արդիական թեմայով:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Ատենախոսության 10-րդ, 16-րդ, 25-րդ, 127-րդ, 136-րդ և 145-րդ էջերում կիրառվում է «անազատություն» եզրույթը կամ դրա հոլովաձևերը, որն անհամեմատ ավելի լայն հասկացություն է, քան «դատապարտում», «պատիժ», «ազատազրկում» և «բանտարկում» եզրույթները, ինչից ելնելով տերմինաբանական միասնականությունից ելնելով՝ ցանկալի կլիներ, որ ներկայացվեր նաև այդ եզրույթի հետ թեկնածուական ատենախոսության առարկա հանդիսացող եզրույթի հարաբերակցությունը:

2. Աշխատանքը հարուստ է տարաբնույթ վիճակագրությամբ, որը հավաքագրվել է տարբեր թվականների համար և տարբեր մեթոդաբանությամբ: Ցանկալի կլիներ հետազոտությունն իրականացնել նույնական ժամանակահատվածի համար, որպեսզի թվային տվյալների համեմատությունն իրականացվեր համակարգված ու ամբողջական: Բացի այդ, հետևողականորեն չեն ներկայացվում բացարձակ ու համեմատական թվային տվյալները: Այսպես, ատենախոսության 36-րդ էջում ներկայացվում է 2011-2023թթ.-ի վիճակագրությունը, իսկ ատենախոսության 37-րդ էջում՝ 2021-2023թթ.-ի, ատենախոսության 38-րդ

էջում՝ 2016-2023թթ.-ի, ատենախոսության 85-րդ և 90-րդ էջերում՝ 2019-2023թթ.-ի, ատենախոսության 104-105-րդ էջում՝ 2015-2024թթ.-ի, ատենախոսության 113-րդ էջում՝ 2020-2023թթ.-ի, ատենախոսության 114-րդ էջում՝ 2015-2024թթ.-ի, ատենախոսության 130-րդ էջում՝ 2019-2024թթ.-ի: Նախ, ցանկալի կլիներ վիճակագրական տվյալները ներկայացնել ներառելով 2024թ.-ն ամբողջությամբ՝ բոլոր ցուցանիշների առնչությամբ, իսկ ելակետային տարեթիվն ընտրել 5 կամ 10 տարվա կտրվածքով:

3. Ատենախոսության 91-րդ, 92-րդ, 94-րդ և 95-րդ էջերում հեղինակը կիրառում է «ռեժիմային գոտի» եզրույթը կամ դրա հոլովաձևերը: Այդ եզրույթը ՀՀ քրեակատարողական օրենսդրությունում առհասարակ չի կիրառվում և հանդիսանում է ԽՍՀՄ օրենսդրությունից մնացած ռուդիմենտար եզրույթ, որը խոսակցական եզրույթ է ու երբեմն կիրառվում է գործնականում: Հետևաբար, գիտական աշխատանքում այն ներառելը ցանկալի չէր:

4. Պաշտպանության ներկայացվող 8-րդ հիմնական դրույթում հեղինակը նշում է, որ անհրաժեշտ է ընդունել միասնական իրավական ակտ, որով կկարգավորվեն քրեակատարողական հիմնարկի շենքային պայմանները, քանզի անձի պահման պայմանները հանդիսանում են կարևոր երաշխիք վերջինիս իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Համանման առաջարկություն հեղինակը ներկայացնում է 6-րդ առաջարկությունում, սակայն բացի ԽԿԿ-ի զեկույցներից, այլ հղումներ ու հիմնավորումներ այս առաջարկի համար չեն ներկայացվել: Միանշանակ համաձայն լինելով առաջարկի հետ, ցանկալի կլիներ հիմնավորումը հարստացնել այլ պետությունների օրինակներով ու կոնկրետացնել շենքային պայմաններին ներկայացվող որոշ չափորոշիչներ:

5. Խիստ ցանկալի էր մանրամասնել անչափահասներին առնչվող առանձնահատկությունները և հստակ առաջարկություն ներկայացնել այս կատեգորիայի դատապարտված անձանց առնչությամբ, առավել ևս, որ ատենախոսության 142-րդ էջում հեղինակը հստակ նշում է, որ «Ի տարբերություն չափահասի՝ անչափահասի վերասոցիալականացման և վերաինտեգրման գործընթացն ունի իր առանձնահատկությունները, որոնք մանրամասն վերլուծված և արտահայտված են միջազգային փաստաթղթերում: Անժխտելի է, որ

անչափահասների հասարակություն վերադարձի և հետագայում նրանց կողմից հանցագործությունների կանխարգելման հարցում անգնահատելի է կրթության իրավունքի պատշաճ իրականացման գործընթացի ապահովումը:»

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր կամ բանավեճային բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Արփի Աշոտի Լազարյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, և ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Դ.Ա.Թումասյան

«13» 05 2025թ.

Դ.Ա.Թումասյանի ստորագրությունը հավաստում եմ:

ՀՀ ներքին գործերի նախարարության
կրթահամալիրի վարչական աշխատանքների
համակարգող պրոռեկտոր Լ.Խ.Մովսիսյան

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ